



Զահրատ

Կաղանդգէք

Հարիւր Կաղանդ ալ կը սպասեն
Եթէ գիտնամ
Թէ վերջընթեր Կաղանդին
Պիտի նուէրս ընդունիս
Ժպիտներուն ամենէն կոյս
Ամենէն լոյս
Եւ ամենէն երջանիկովն աղուորցած

Հարիւր Կաղանդ ալ կը սպասեն սիրելիս
Նուէրներուն ամենէն կոյս
Ամենէն լոյս
Եւ ամենէն իշխանականը գատած
Եթէ գիտնաս թէ կը սպասեն սիրելիս
Զոյգ ձեռքերըս սրտիս նման քու անունիդ երկարած

Հարիւր Կաղանդ ալ կը մընամ առանց քեզի սիրելիս
Գիտնամ միայն թէ վերջընթեր Կաղանդին
Ժպիտներուն ամենէն կոյս
Ամենէն լոյս
Եւ ամենէն երջանիկովն աղուորցած
Պիտի գաս

Հարիւր Կաղանդ ալ կը սպասեն սիրելիս

Գիտնամ միայն

Թէ անպայման

Կաղանդներուն ամենէն կոյս

Ամենէն լոյս

Եւ ամենէն երագային հարիւրերորդ Կաղանդին

Մշտադալար եղելինի մը տակ լուռ

Պիտի հալինք պիտի հատնինք անւանանք միասին

Անվերադարձ Կաղանդներուն պէս կեանքին

Հարիւր Կաղանդ ալ կը սպասեն

Գիտնամ միայն որ դուն գիտես թէ կը սպասեն սիրելիս